

ԻՐԱՎՈՒՆԿ

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՔԱՂԱՔԱ

ԿՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԱՄԵՆ ԶՈՐԵՔՇԱԲԹԻ ԵՒ ՇԱԲԱԹ

Rev. Pere G. Kalemkarian Meechitaristengasso
№ 4 Vienne

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
Ներկայ 1898 թվականի
Պաշտոնային համար 12 ֆրանկ
» » վեցամսեայ 6 »
Արտատպարանի » տարեկան 14 »
» » վեցամսեայ 7 »
ԿԱՆՆԻԿ ՎՃԱՐԵԼԻ

Համակ դրամ եւայլն դրկել հետեւեալ հասցեով
ԽՐԱԳՐՈՒԹԻՒՆ ԵՒ ԼՐԱԳՐՈՑ ՎԱՌԵԱ (ՊՈՒԼԿԱՐԻԱ)
Редакция на вѣстникъ
„Иравункъ“
ВАРНА (България).
Rédaction du journal
„Iravounk“
VARNA (Bulgarie)

Խմբագրութեան ուղղեալ գրութիւնք
էս չեն դրկուիր եւ յարմար դատարան
ները միայն կը հրատարակուին անդո-
շովին կամ մասամբ:
Մանուցման տողը 20 սանթիմ. երե-
ֆեկ աւելի անգամներու համար 20 0/0
գեղջ կը լինի, փոխարէնը կանխիկ:

Տիար Յ. Պ. Իրաւունքէն մեկնաճ
չէ, ինչպէս տեղական թերթ մը
խնդրութիւնով էր, այլ է՝ և պիտի
մնայ մեր թերթին մնայուն աշխա-
տակիցը:

Գոհութեամբ կը փութանք մեր
ընթերցողներուն ծանուցանել նաեւ
թէ՝ կարեւոր գրիչներ՝ Իրաւունքի
համար իրենց համակրութիւնէն
դուրս ելած, նոյնպէս խոստացած են
իրենց մնայուն աշխատակցութիւնն,
որուն համար հրապարակաւ անոնց
կը յայտնենք մեր շնորհակա-
լիքը:

Ուշերու այս նոր բարդումը մեզ
գիւրդութիւն պիտի տայ «Իրա-
ւունք»ը յառաջիկայ 1899 տարեշրջ
շանին մէջ աւելի չափերէն և օգ-
տակար հանգիստացնել մեր ընթեր-
ցողաց:

Խմբագրութիւն

ՊԱՏՐՈՒԱԿ

Այս սինակներուն մէջ յոճախ
այսպէս խոստովանեմք մեր այն խոհմ
և ունեւոր դասակարգը որ վերջին
տարիներու յեղափոխական շար-
ժումներուն հանդէպ կրտսորական
դիրք մը բռնելով՝ գրեթէ ակամայա-
միայն քիչ մը դարձ տալէ ետքը,
այսօր, մեր որքան մեծ այնքան
անակնկալ ազդեանքներն յետոյ, յե-
ղափոխութեան ամենէն անողորմ
քննադատը դարձեր է, կը հար-
ուածէ զայն անխնայ, և քանզի
կը ձգտի շարունակ, առանց իր
կողմէ ու է դրական գործունէութիւն
մը ցոյց տալու և առանց
մինչեւ իսկ նոր ուղղութիւն մը
մատնանիչ ընելու: Կարծես թէ
յեղափոխական կազմակերպու-
թեանց տկարանալը կամ կոպտա-
լուծումը պարզապէս հայրենիքի
փրկութիւնը պիտի նշանակէր և
թէ հետեւապէս այդ քանդումին
ձգտիլը մեր բուն, միակ նպա-
տակը պարտի ըլլալ:

«Քննադատելը դիւրին, իսկ ա-
րուեստը դժուար է» և կրտսէ եւրո-
պական առածը: Այս է պատճառը որ
այդ գոտակարգը գիտէ միայն հար-
ուածել ինչ որ քննադատ կը գտնէ
ու հո՛ն կը կենայ, չի համար-

ձակիր քայլ մը եւս ընել ու թե-
ւակախել գործունէութեան մը առ-
պարէզը: Ո՛ր է, ինչ բանի մէջ
է սակայն այն դժուարութիւնը ու
բուն առջեւ կընկրկին գիրքի և
ազդեցութեան տէր, կարող հայ
անհատներ:

Հանրային գործերը, կախում
չունենալով այս կամ այն մասնա-
ւոր անձերու բացարձակ կամքէն,
այլ ենթարկուած ըլլալով վար-
չութեան մը հաւաքական կամքին,
յաջողելու համար կը կարօտին
տոկուն, շրջահայեաց և համբերա-
տար աշխատութեան: Այս ստույգ
է նոյն իսկ այն կազմակերպու-
թիւններուն համար ուր միացած
ըլլան ուղղութեամբ և սկզբունք-
ներով համախոհ մարդիկ: Պէտք
է ժամանակ, աշխատութիւն, խիղ
և դրամ գոհել: Ասոր համար ալ
հարկաւոր է ունենալ անձնութիւն
թիւն որոնք գէպի ազգային շահե-
րը: Հոս է ահա դժուարութիւնը,
որ կը կոստենէ շատերը և զանա-
կը դատապարտէ լոկ քննադատներ
մնալու:

Այս է ճշմարտութիւնը, զոր
սակայն իրենք չեն ուզեր խոստո-
ւանիլ, որովհետեւ ազգասէր ե-
րկնայու մտաւ և մինչեւ այդ յիշա-
նակներուն մէջ ալ ծաւալած է ար-
դէն:

Իրենց անտարբերութիւնը և ան-
գործութիւնը այսպէս ցոյց տալու,
իրոք արդարացում, սա պատրաստ
պատասխանը ունին: Առ այժմ
մինք անընդունակ ենք ունէ գոր-
ծի, որ հաւաքական կարեւոր ու-
ժերով կրնայ կատարուիլ: Մեր
այն բարոյական թերութիւնները,
որոնց պատճառաւ մեր ամեն հա-
ւաքական ձեռնարկները անյաջո-
ղութեան կը մատնուին, պէտք է
որ նախապէս ուղղուին: պէտք է
որ մեր հանրային բարքերը նախ
ազնուանան: Ուստի հիմա ամենէն
էական գործը մեր գործընկերուն
ուժ տալն է, որպէս զի լուսագործ
միտաշխ ուժեր գոյացնելու և ա-
նոնցով մեծ արդիւնքներ ար-
տագրելու:

Այս խօսքերը առաջին պահուն
այնքան բանաւոր կերեւան որ

ունկնդիրը ընդհանրապէս տեղի
կուտայ, մոռնալով առարկելու թէ
մեր վարչութեանց արդի վիճակին
մէջ, զոր անխնայական կարելի
է կոչել առանց չափազանցութեան,
ինչպէ՞ս յուսանք որ ազգ. դպրոց-
ները ամեն տեղ նպատակաւորմար
միօրինակ ուղղութեամբ երկար
տարիներ անընդհատ պիտի ըն-
թանան, որպէս զի կարենան միեւ
նոյն ձգտումները ունեցող և հա-
մարաշխութեան ոգիով օժտուած
նոր սերունդ մը ընծայիլ հայու-
թեան: Մեր ո՞ր վերին իշխանու-
թիւնը, մեր արդի կացութեան
մէջ, իրօք կարող է միօրինակ փա-
փաքելի ուղղութեան մը մէջ դնել
մեր բոլոր դպրոցները, որոնց իւ-
րաքանչիւրը այսօր գրեթէ բոլո-
րովին ազատ է իր գիտցածին պէս
ընթանալու: Ո՞ր հոգաբարձու-
թիւն ունի այնքան հաստատուն
պիւտքէ մը որ կարենայ երաշխա-
ւորել թէ երկար տարիներ պիտի
պահէ իր դպրոցը միեւնոյն բար-
ւոր վիճակին մէջ:

Շատ պարզ է ուրեմն որ չենք
կրնար մեր բոլոր յոյսը միմիայն
յաջողութեան վրայ դնելով,
անհոգ ու անգործ մնալ: Արդա-
րացում չիկայ հոգ, այլ լոկ պատ-
րուակ մը՝ չընելու ինչ որ կրնանք.
և եթէ չենք կրնար, կամ գոնէ
ցարդ չի կրցանք մեր միահամուռ
ուժերը ընդարձակ կազմակերպու-
թեան մը մէջ կեդրոնացնել, կը
նշանակէ թէ պէտք չէ նաեւ որ
գոնէ համախոհներու խմբումնե-
րով տեղական նիւթական և բա-
րոյական համեստ ուժեր գոյացնել
ձեռնարկենք առ այժմ, որոնք իբր
նախապատրաստութիւն կրնան ի-
րենց մեծ նշանակութիւնը ունենալ
ապագային համար: Այսքանին
ալ ուրեմն անընդունակ ենք իրօք
մեր անմիտքան ոգիով ու անհա-
մեքաշխ բարքերով: Չեմ կարծեր
ժամանակ, խիղք, ջանք և դրամ
մէջ մէկ քիչ զօհելու յանձնառու-
թիւնը միայն պիտի բաւէր հա-
մեստ սկզբնաւորութեան մը յաջո-
ղութեան: Ուրիշ արգելք չի փնտ-
ռելք, ոչ ալ մեր անտարբերու-
թիւնը արգարացնելու համար, ո
և է պատրուակ:

Բ. Պ.

ԱՆՓՈՓՈՒՆԵԼԻՆ

(Շարունակութիւնը նախորդ քիւնէն)

Քահանայ կամ վարդապետ, ինչ
որ ալ ըլլայ եկեղեցական մը, ի-
րեն համար շատ խիստ, շատ ան-
բնական է մեր եկեղեցիի այս ա-
մուսնական արգելիչ օրէնքը որ
մեր մէջ կեղծաւոր ու անպարկեշտ
կղերականներու թիւը ստուարաց-
նելէ անդին ո՞ր և իցէ բանի ծա-
ռայած չէ և, ըստ իս, չի կրնար
ալ ծառայել:

Կաւելցնեմ հոս թէ մեր եկեղե-
ցիին իշխանութիւնը շատ ընդար-
ձակ է դեռ, անանկ որ կղերնե-
րէն զատ աշխարհականներն ալ,
ըլլայ այր, ըլլայ կին, հարուստ
ները մինչեւ անգամ, պարտաւոր
են կուրօրէն հնազանդի անոր օ-
րէնքին ու աւանդութեանը:

Նոյն խստապահանջ և խստըմ-
բեր օրէնքն է դարձեալ որ կար-
գիլէ կնոջ ամուսնանալ ուրիշին
հետ, նոյն իսկ եթէ էրկը իր
քմահաճ գործածութեանը յանձ-
նուած ստորին առարկայ մը նը-
կատէ և ամեն օր գանակոծէ, նա-
խատէ ու վիրաւորէ զանի: Բնա-
կան է որ մէկը չի սիրէ իր ամու-
սինը երբ սա գարշելի մոլութիւն
ներով ապականուած, ամեն ազ-
նիւ զգացման հրաժեշտ տուած,
մարդերու է՛ն ցածն է, անտանելի
բեռ մըն է պարզապէս, որ ընտա-
նեկան յարկը գեհնի մը կը փո-
խակերպէ: Բայց ինչ ալ ըլլայ,
խաչը մինչեւ գերեզման չաղկելու
է. որովհետեւ օրէնքը անգուժ է,
անողորմ ու անկարեկիր է ամեն
թշուառութեան հանդէպ. բան մը-
տիկ չընենք և չի ներեր որ այր ու
կին իրար զիրար թողուն և ամուս-
նանան ուրիշի մը հետ:

Կը տեսնենք գոնէ քաղաքական
աշխարհին մէջ որ օրէնքները եր-
բեմն կը փոխուին հասարակական
կեանքի պայմաններուն ու պահան-
ջումներուն փոփոխութեանցը հետ
և գրեթէ ամեն պատմական չըր-
ջանը իր յատուկ ու պատշաճ օ-
րէնքը ունեցած է: Մարդիկ են
որ կը հաստատեն ու կը փոխեն
կանոնն ալ, օրէնքն ալ իրենց ծա-

մանակակից պէտքերուն ու շահերուն համեմատ. և, յայտնի է, վերին աստիճանի յիմարութիւն է ոչխարային հնազանդութեամբ հրապարակին անա՛նկ օրէնքի մը զոր դարեր առաջ, հիները՝ տեսակ տեսակ հաշիւներով և յաճախ կարծ. մըտութեամբ, հաստատեր են և որ սակայն այսօր հակառակ ճան. չըցուած է մարդուս անժխտելի պէտքերուն ու իսկական շահերուն: Բայց որո՞ւ կըսես: Մեր մէջ, եկեղեցական ու աշխարհական, ամեն անոնք որ քիչ մը խելք ունին, քիչ մը կը ճանչնան աշխարհն ու կեանքը, տարակոյս չի կայ թէ հասկցած են որ մեր եկեղեցիի ամուսնական օրէնքը բացարձակ կերպով հակառակ է բնութեան ու մարդուս իրական օգտին և, աւելի կամ նուազ տարբերութեամբ, անխիղճ զրկանքի կը ենթարկէ վարդապետն ալ, տէրտէրն ալ, աշխարհականն ալ: Այսու հանգերձ տակաւին շատ քիչեր կան որոնք արտոնց կը փափաքին հիմնական և օգտակար բարեփոխութիւններ մտցնել հին, բարի ժամանակներէն մեզ կտակուած եկեղեցական «Օրէնք»ին մէջ: Մեր հոգեւոր պետերը անփոփոխ և անաշխարհ կը նկատեն ամուսնական, ինչպէս նաեւ ամեն օրէնք, և տառ մը անդամ փոխելը սրբապաշտութիւն կը սեպեն:

Ու մենք միշտ անպակաս պիտի ունենանք կեղծաւոր ու հաճոյամիլ կուսակիւցներ, ըմբոստող քահանաներ՝ մինչև չի հասկնանք թէ հաստատուած օրէնք մը չի կրնար անփոփոխելի ըլլալ:

Այս բացայայտ ճշմարտութիւնը ըմբռնելու չափ ալ տգէտ են մեր կաթողիկոսները:

Ամենեւին կանուխ չէ, երբ բոլոր ուժով պահանջենք որ մեր օրէնքներուն ու բարքերուն մէջ մտցնեն լուրջ, օգտակար և բնութեան հետ հաշտուած բարեփոխութիւններ:

ՎԱՀԱՆ ԵԱՅՐՈՍԱՆ

ՆՈՒՊԱՐ ԲԱՇԱ

Մեր մէջ կը գտնուին կարգ մը հրապարակագիրներ, որոնք բարոյականի ամենէն տարրական ըսկզբունքները արհամարհելով հանդերձ, շատ անգամ, յանուն բարոյականի, կը համարձակին անըստգիւտ անձնաւորութիւններ դատափետել անխոստովանելի հաշիւներով ու գիտութիւններով:

Այդ կարգի հրապարակագիրներու մէջ ամենէն տխուր դերերէն մին ստանձնած է Պ. Բիւզանդ ֆէշեան «Բիւզանդիոն»ի տնօրէն. խմբագրապետը, որ վերջերս իր թունաւոր սրբանքը արձակած էր յարգուած ու պաշտուած անձնուրութեան մը, բարձրապատիւ Նուպար բաշայի վրայ:

Ծիծաղելի յաւակնութիւն պիտի

ըլլար անշուշտ քարոզել թէ մեր ականաւոր անձնաւորութիւնները, եկեղեցական կամ աշխարհական, քննադատելի կողմեր չունին: Նուպար բաշան ալ, ինչպէս ուրիշներ, կրնայ իրեն մարդ իր թերութիւններն ունեցած ըլլալ: Հետեւաբար մենք Նուպար բաշայի մասին եղած քննադատութեան մը համար չէ որ պիտի բողոքէնք, այլ պիտի պախարակենք, բարոյականի տեսակետով, այն ամեն գրողները, որոնք կամ տղիտաբար և կամ չարամտութեամբ իրողութիւնները, պտտութիւնը կը խեղաթիւրեն և այս կերպով մարդասպանէ մը աւելի չարիք կը հասցնեն ընթերցող հասարակութեան: Մեր վարոյթը այնքան աւելի մեծ է այդպիսիներու դէմ որքան կը մտածենք թէ ամէն ազգի մէջ, լրագրութիւնն է որ հանրային կարծիքը կը շինէ ու անոր կ'առաջնորդէ: Իրաւունք ունինք ուրեմն անխղճամիտ կամ տգէտ առաջնորդները հասարակ ոճրագործներէն վատագոյն համարել, համեմատութեան գնելով յառաջ եկած չարիքին բողոքատական աստիճանը: Մեր համոզումով հասարակութիւնը շատ խիստ ըլլալու է անբարոյական գրիչներու դէմ: Իրենց մեծագոյն պատիժը ասիկա պիտի ըլլայ: անգամ մը որ հասարակութեան անտարբերութիւնն ու նողկանքը զիրենք գիտաւորէ, ապահովապէս կ'ամ պիտի պարտաւորին ընթացքին փոխել և կ'ամ ասպարէզեն հեռանալ Դժբաղդութիւնը հոն է որ մեր հասարակութեան մէջ, ամեն աշխարհակ դաշտիւր, ամէն ուղղութիւն քիչ թէ շատ ընդունելութիւն ու քաջալեր կը գտնէ և ասոր համար բարոյապէս ինկածները բաւական ստուար թիւ մը կը կազմեն հրապարակին վրայ:

Բիւզանդ ֆէշեանի՝ Նուպար բաշայի նկատմամբ գրած խմբագրականը քննութեան առնելէ առաջ, պահ մը ծանրանանք «Բիւզանդիոն»ի տնօրէն. խմբագրապետին անձին վրայ և գիտնանք թէ ո՞վ է այդ մարդը և ի՞նչ է իր մօտիկ անցեալը:

Ամենուն յայտնի է որ Բիւզանդ գետ իր համանուն թերթը չը հիմնած, կ'աշխատէր հին «Արեւիք»ի խմբագրատունը: — Առանց իր խմբագրական բաժնիդակ կիանքին քննութեան մէջ մտնելու, յիշէք այստեղ միայն խիստ յատկանշական դէպք մը որ ինքնին կը բաւէ նկրթի մարդը մերկացնելու: Բարթոլոմէոս Եպիսկոպոսի տեղապահութեան օրով, 1896 ի պահպանի ցուցին յաջորդող սարսուփներէն յետոյ, մէկ կողմէն ինքը Բարթոլոմէոսը ու ֆաղաքական Ժողովոյ Դրան պաշտօնակալ անդամները, և միւս կողմէն Բ.

Դուռը ամէն ջանք ի գործ կը դրնէին որպէսզի Պոլսոյ հայ մամուլը, որուն զլխաւոր ներկայացուցիչն էր այն տոնն «Արեւիք», գովաբանական յօդուածներ հրատարակէ Տիգրայի հին նկատմամբ: Եւ որովհետեւ Դուռը չէր ուղիւ իր կողմէն բացարձակ առաջարկներ ընել, այդ պաշտօնը յանձնուած էր Պատրիարքականի Ժողովներուն անդամակցող հայ էֆէնտիներուն սրտնց մէջ ամենէն փութկոտը կը ձեռնարկէր: Չոյեան, այդ պաշտօնը, ինքնահաւան ու անսովոր արարածը, Չոյեան քանիցս դիմումներ բրած էր «Արեւիք»ի խմբագրատունը և երբեմն խօսած էր մինչև իսկ ըս. պառնական ոճով: Բայց ի պատու այն տոնն «Արեւիք»ին վարչական մարմնայն, կրնանք լսել թէ միշտ քաղաքավարական մերժումներու բաղկում էր և յուսահատ՝ ալ իսկ մէկդի թողած էր իր ըստանձնած դերի յաջորդութիւնը իրականացնելու ամենակարգութիւնը: — Եւ սակայն Բարթոլոմէոս՝ Երիստ Չոյեանէն ուսկի ճարտիկ գտնուեցաւ: Խոստացու ֆէշեանին որ խոսգիւղի կոտորածի միջոցին յիշտի տունէն կողոպտուած կուրասիներու փոխարէն գրումական հատուցում կ'ստանայ Օսմ. կառավարութենէն եթէ ֆէշեան համաձայնի գովաբանական յօդուածներու շարք մը հրատարակելու Բարթոլոմէոսի մասին «Արեւիք» լրագրին մէջ: Ֆէշեան իր հաւանութիւնը տուաւ և ահա յօդուածները պատրաստ էին երբ «Արեւիք»ի այն ատենուան վարչութիւնը արգիլից գանձեց, ինչ որ Բիւզանդ էֆէնտին գնաց «պէտք եղած տեղը» իմացուց. ասոր վրայ էր որ «Արեւիք» ցմիշտ խաբանման դատապարտուեցաւ ու վարչական Ժողովի անդամները ու խմբագիրներն ալ հարցաքննութեան ենթարկուեցան: Իսկ Բիւզանդ էֆէնտի ֆէշեան, «ի փոխարէն իր մատուցած բարեք ծառայութեան», «Բիւզանդիոն» անունով հայերէն ամենօրեայ թերթ մը հրատարակելու արտօնագիր ստացաւ Օսմ. կառավարութենէն:

Ահա ա՛յս մարդն է որ հիմայ ելեր Նուպար բաշայի գործերը կը քննադատէ ու զանի բաւական ազգասէր չի գտներ մեռնելէն յետոյ իր անունը անմահացնելու համար:

Նպաստի համար Նուպար բաշայի դիմում բրած ու մերժուած բարիքեան ուսանող մը, սրտին դառնութիւնն էր ընդարձակ թղթակցութիւն մը գրելու իր կողմէն «Բիւզանդիոն»ին, այն մը տաճութեամբ որ պիտի կրնայ առաջ Բաշայի համարուն փնտսել ու իր վրէժը յուծել: Խեղճ տղան չէ կրցեր բրնձնել թէ իր գրածներուն մեծագոյն մասը աւելի՛ գովեստի կարգ կ'անցնէր քան թէ պարսաւանքի: Բայց միամիտ ուսանողը

գտնէ սա արդարացումը ունի որ անկեղծ գտնուած է իր վրիժառութեան զգացումին մէջ:

Բիւզանդ էֆէնտին ոչ միայն իր սխանկները լայն կը բանայ այդ թղթակցութեան, այլ նաեւ իր կողմանէ խմբագրական մ'ալ կը նշանակէ անոր, որուն մէջ ամենէն յիմար յարձակումները կ'աւելլէ Բաշայի հասցէին:

(Շարունակելի)

ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

ԱԶԳԵՑՈՒԹԻՒՆԸ

Ընկերական կարգ ու սարքին ամենէն անխախտ խախտը երեսասարդութեան բարոյական դաստիարակութիւնն է:

ԿԻՉՕ

Նախորդ յօդուածով մը ընտանիքին մանկան վրայ ունեցած ազդեցութիւնը ցուցնելով կ'ըսէի թէ, որքան մաքուր ու անապակ ըլլայ անոր ապրած բարոյական միջավայրը, այնքան ազնիւ ու վեհ նկարագրի տէր սերունդ մը կը պատրաստուի ապագային համար: Եւ թէ՛ բարոյական դաստիարակութեան այս պարտականութիւնը գերազանցապէս կը ծանրանայ մայրերու վրայ: Համբերատար ու տոկուն աշխատութեամբ հետեւելով իրենց պարտքին, անոնք լսելի մանուկեան մէջ կը կատարեն աշխարհի լաւագոյն գործերը:

Ընտանեկան այս դաստիարակութիւնը միշտ կը սեւէ կեանքի մէջ: Բայց կուգայ վայրեան մը որ անիկա կը դադրի այլ եւս մանուկին հոգւոյն ներգործող միակ ազդակն ըլլալէ: Պարտքը, ընկերական միջավայրը, մամուլը կուգան շարունակ ձեւակերպել մանկական նկարագրի օրինակի ազդեցութեամբ, աւելի զօրեղ ու բազմակողմանի, ուր կրնայ մոլորիլ եթէ ընտանեկան դաստիարակութիւնը թոյլ ու տկար եղած է:

Եւ պէտք է գիտնալ որ ընկերութիւնը — ուր մարդ ստիպուած է անցնել իր կեանքին մեծագոյն ժամանակը — արտաքին ու բնագործիկ համախառն մը չէ, արդիւնք չիմ գիտեր որ դիմաւորին կամ քմածին պայմանագրութեան, որ եկած է մարդկութեան սյդրական ու բնական վիճակը փոխակերպել: Անիկա արդիւնքն է անյողող ու անընդհատ բնագործ մը զոր ամէն մարդ իր սրտին մէջ կը գտնէ, եւ որուն արմատները կը մխրճին ամենախոր սլքերն իր էութեան: Անիկա շաղխումն է բոլոր զգացումներով ուրանք մարդը զէպի իր նմանը կը ձգեն, որոնք զինքը կը մղեն ընդհանրութեամբ հագալու բնականօրէն ընդհանուր իրենց պէտքերը: Համաձայնութեամբ խորհելու վտանգներու եւ շահերու վրայ, բազմապատկելու ընկերակցութեամբ այն ուժերը զորս կը զիջուած անկարողութեան պիտի մասնէր. վերջապէս փոխադարձ համեմատութեամբ մը ըստեղծելու այն թիկունքն ու պաշտպանութիւնը զոր չի կրնար անհատապէս զանց առնել:

Այսպէս ուրեմն մարդ էակը բացարձակապէս կախում ունի իր ապրած ընկերական միջավայրէն: Այս կախումը զգալի ըլլալ մարդանոց իր նիւթական պտքերուն վերաբերեալ խնդիրներու մէջ, որոնց գոհացման համար անհրաժեշտաբար պէտք ունի ընկերական բոլոր ուժերուն միահամուռ աջակցութեան: Իր կերած հացն ու իր զգեցած

լաթը, իր աշխատութեան բոլոր գործիքներն ու իր վայելած բոլոր վայելքները, առանց բացառութեան, իր նրամաններուն միացեալ քրտինքով արդիւնաբերութեամբ են եւ սպասելուած՝ այն ընկերական պաշտպանութեամբ որ զինքը կը շրջապատէ որքանէն սկսեալ եւ որ իրեն կ'ընկերանայ մինչեւ զերեզման: —Եւ ընկերութեան այս բնական բարիքներուն պատճառէ աւելցնել անոնք որոնք ուղղակի մարդուն բարոյական ու մտաւոր կեանքի զարգացման կը վերաբերին: Իմացական ամենաբարձր կարողութիւնները, սրտի ամենամաքուր մարմնները, սրտի ամենասուրբ բովանդակները, փոխելու համար ընկերական միջավայրին պէտք ունին, ինչպէս հողին ընթերցանութեան յանձնուած սերմերը ունենալու համար պէտք ունին մթնոլորտին բեղուն արտաքուրտմանը եւ արեգակին կենսատու ճառագայթներուն:

Խիստ մատաղ հասակէն սկսող այս անհրաժեշտ կախումն իր նմաններէն, անշուշտ հզօրապէս պիտի ներգործէր մանկան նկարագրին զարգացման ու կրթութեան վրայ:

Արդարեւ այն օրէն երբ մանուկը գուրա կ'ելլայ ընտանեկան շրջանակէն զարգացման համար, իր նկարագրի կազմութիւնը կը սկսի մեծ յեղաշրջման մը ենթարկուիլ: Դպրոցը՝ բացի ստուշ վայրէջքէ մտաւոր անուշեղէն առաջին անգամ ըլլալով անոր առջեւ կը բանայ ընկերական շրջանակը որ մեծապէս կը ներգործէ զեռարդ հոգիներու վրայ՝ օրինակի հօգի ազդեցութեամբ: Վարժարանին սեմէն ներս մըտածին պէս մանուկը՝ ամէն զստակարգէ ընտանեաց տղաքներու եւ ամենէն՝ այլազան նկարագրով հասակակիցներու հոծ խաղմով խմբով կը շրջապատուի: Բայց երկու շարքով չի սեւեռ, եւ ընկերներու այս քաղաքան քաղաք կը պարզուի, կը մաքուրի ու կ'ամփոփուի իր նկարագրին ու բնական հակումներուն հանգուցաւոր կապերու շնորհիւ շրջանակի մը մէջ: Այլ ալ ունենաւ անոնց ազդեցութիւնը ախտաւորութիւն է, եւ աշխարհի սեմին վրայ իրենց կրած այս առաջին տպաւորութիւնները իրենց ապագայ գործունէութեան զսպանակը պիտի մնան միշտ: Մանկական յիշատակները հայելիի նման են ուր կը տեսնէ մարդ իր նախնական տպաւորութիւններու Առաջին ուրախութիւնը, առաջին վիշաքը, առաջին յաջողութիւնը, կամ առաջին ծախողութիւնը իր կեանքի օճեղէնը: Ինչպէս Լաֆօնդէն ծով էր պատանեկութեան ժամանակ սակայն անգամ մը Մալեբրիտի աղբերակները լսելով բացառապէս. «Ան ալ բանաստեղծ եմ»: Իր հանճար արվեստէն էր, եւ այսօր ամենէն ժողովրդականացած առակախօսն է. Ֆրանսայի ռակետարու փառքերէն մէկը:

Մարդը կարելի է ճանչնալ, բոլոր են, իր յաճախած ընկերութենէն: Բնականաբար պարկեշտ մարդը չի ընկերանորոգուի ու վարչապետ մտքերու, կոպիտ ու արեւոյդ անձերու շրջանակի մը հետ: «Գայլերու հետ ապրողը՝ գայլերու պէս ունի կը սորվի» կ'ըսէ սպանիական առած մը: Լաւ ազդեցութեան ու հսկողութեան տակ մեծցած մանուկը միշտ բարոյապէս իրմէ վեր մարդոց ընկերակցութիւնը կ'որոնէ ու կ'աշխատի անոնց նմանիլ: Ընտիր անձերու շրջանակին մէջ անկողն կը գտնէ առողջ ու լաւագոյն սնունդով, միջոցաւ վաստաւոր մերձակոթութիւնը յոսի ախտեր միայն կ'արթնան իր մէջ: Ինչ սովորութիւնները այն աստիճան բաւարար են որ, ուրքան ալ մտու թիւնն աստիճան, զարձակ ախտայ կը հետեւին մը:

Ախտաժէտ հակումներուն: Մարդկութեան հոծ մեծամասնութիւնը ունակութեանց գէտ մտքառեւելու անկարող ըլլալով, շատ անգամ անոնց զերին կ'ըլլայ: Եւ այս տեսակէտով մինչեւ անգամ ետաքէր ու միջակ անձերու յատուկ ընկերակցութիւնը վերապահ է. որովհետեւ անոնք սովոր կը հաղորդեն տեսակ մը չոր, զգուշաւոր ու շահասիրական տրամադրութիւններ, որոնք միշտ հակառակ են ճշմարիտ արեւելեան եւ անվերք քաջութեան: Միտքը կը վարժուի ա՛մուկ շրջանակի մը մէջ՝ յաճիլ շարունակ, սիրած կը սեղմուի ու կը սահմանափակուի, եւ այնուհետեւ մանուկը բարոյապէս տկարանալով թոյլ, յեղեղուկ ու դիւրամիտ է: Եւ միշտ կը դառնայ՝ բացարձակապէս անկարող վե՛հ ձգտումներու եւ իսկական անձնութեան:

(Շարունակելի) Լեւոն Սարգսեան

ԼՐԱՔԱՂ

Պատրիարքարան հասած տեղեկագիր մը Ալին Գաւառ. Ը դհ. և կրօն. ու Գաղ. ժողովոց վերակազմութիւնն, ինչպէս նաեւ Ուսումն. և Տնտես. խորհրդոց ընտրութիւնները ծանուցած է:

Կնքցեն Ալիցիք, որ սուրին և կրակին արհաւիրքներէն սթափուլով, սահմանադրութեան նախնական ծախողութիւնը կը ջանան ձեռք բերել իրենց ազգային կազմակերպութիւնը:

Բաղէշէն կը գրեն թէ՛ Ալաշկիրտ գաւառի Լօնտալի գիւղէն մէկուկէս ամիս առաջ ձեռք բերուած հայերէն 8 հոգի անպարտ արձակուելով, Բաղէշ բերուած ու առաջնորդարանի կողմէ սովորական գործողութիւնները կատարուելէ վերջ, զրկուած են իրենց զիւղիւրը:

Բերաի թաղ. խորհրդոց ընտրութեան քուէարկութիւնն կատարուելով, Յովհաննէս Նուրեան քուէից բացարձակ առաւելութեամբ թաղական եղած է:

Օրմանեան Պատրիարք կրկին շարժում օր կայս. պալատ երթալով Ա. քորտուղը թահախն պէլին հետ տեսակցած է:

Ինչպէս կ'երեւայ Պատրիարքարանին և պալատի միջեւ կարեւոր խնդիր մը կը ծնուի, որ հաստատուի մահկանացուներու համար գողտիք է առ այժմ:

ԼՂՍԻՍԻՍԻՍ Սինդիկատ կողմէ Տիգրիսի առաջնորդին հրահանգ զրկուած է թէ՛ ամեն թաղի աւագներէնցները ի ներկայութեան կ'աշխատի, իստիւ պատուիրէ, որ նոր գրութեամբ բացաւորիք զարդաներուն վրայ հսկեն ու չի ուշով՝ կրօնային գաղափարներուն և հայ լեզուի ուսուցման մասին ընկեն իմանան թէ՛ այս առարկայը ինչպէս կ'աւանդուին, նոր կարգուելիք ուսուցիչները կ'որոշեն, ուղեկ գտնուողներ, բաւական ժամանակ կը տրուի այս գրականութեան և ուղեկ: Եւ թէ՛ ունեն թերութիւն տեսնեն, պարտին անմիջապէս շարժուիլ:

պէս Սինդիկատ իմացնել: Թիմակաւ առաջնորդը պատասխանատու պիտի ըլլայ եթէ այս առարկան իրեն պարտ ու պատշաճ խնամք չի տրուի:

Պոլսոյ Բագր. վարչական ժողովներուն երկուսն ալ շրջանը լրացած լինելով, անմիջապէս, ըստ ազգ. սահմանադրութեան, Երեսօր. ժողով հրաւիրուի ու նոր ընտրութեան ձեռնարկուի տեղ, Պատրիարքը պատի պատ բացատրութիւններով, կուզէ գործը մինչեւ յառաջիկայ Մայիս երկարաձգել. որովհետեւ ինչպէս անկարող է Երեսօր. ժողովոյ գումարման համար Պաշտօն տրամադրութիւն ստանալու: Խնդրոյն վերջնական որոշումը այս շարժումն իստիւ ժողովին ձգուած է:

Իպրաիլէն մեղ զրկուած նա. մակէ մը կը տեղեկանանք թէ՛ Աղէքսանդրիաէն իտալական շոգեւաւոր եկող Ռոտտստոյի հայ ընտանիք մը, օրինաւոր անցագիր ալ ունենալով հանդերձ, ռուսական կառավարութեանէն չէ թոյլագրուած ցամաք ելնել:

Պապատաղի հրկիզեալ եկեղեցիին վերանորոգութիւնը դեռ աւարտած չըլլալով, կրկին տեղւոյն քահանան Ռոմանիոյ հայաբնակ բազմութիւնը կը շրջի նպատակ հաւաքելու: Նոյն քաղաքի ազգային վարժարանը եւս այժմ փակուած է:

Կօկիսանի հինգ զիւղերէն Պատրիարքարան հասած հանրագրութիւն մը հաղորդած է թէ հոն առանց քահանայի մնացած են և իրենց նշնանները ու կենդանիներ հոգեւոր մատակարարութենէ իսպառ զրկուած են, և լատին ու հայ-հռոմէական վարդապետներն և բողոքական պատուելիներն թաց ասպարէզ գտած են գործելու:

Վհհ. կաթողիկոսը Նոյեմբեր 15ին ԼՂՍԻՍԻՍԻՍ Թիֆլիս պիտի մեկնի, և ուր պիտի մնայ ամբողջ ձմեռը և մինչեւ Զատիկ:

«ԻՐԱՆԻՆՔ»Ի ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԸ

«ՇԱՐԺՈՒՄ»ԻՆ. — Տեսնելով որ ձեռք տնտեսական համեմատ Տ. ձգնաւորանի պատին վերաբերեալ վերջին վիճարանութեան մէջ ալ, բուն խնդիրը մէկի մէկ ձգելով անոր հետ ուղղակի յարաբերութեան չունեցող կէտերու վրայ կը ծանրանք եւ բոլորովին անձնական կը դարձնէք վէճը, որպէսզի թէ օրինաւոր վիճարանութենէ խոյս տաք, որ ձեր գործին չի գար, եւ թէ հայտնելու առիթ ունենաք, որուն համար կ'երեւայ թէ ընդարդ անդամագրելի հակում մը կ'զգաք, մենք կը հրաժարինք ձեզի հետ վիճարանելէ եւ կը փակինք խնդիրը: Այլ գուք կարող էք գրել ինչ որ եւ ինչպէս որ կուզէք, մենք անկարող ենք վիճիլ ձեր սիրած եղանակով որ մեր ուղղութեան հակառակ է եւ մեր ընթերցողներուն տաղտուկ և զրուանք պատճառելէ զատ արդիւնք մը չի կրնար յանգել: Ով որ այս մասին որոշ պաշտօն մը կ'ազմել կուզէ, թող հաճի քիչ մը ուղղորդութեամբ աչքէ անցնել Իրաւունքի եւ Շարժումի վերջին թիւերը, որ պիտի տեսնենք:

տեսնենք թէ մեր օրինաւոր առարկութեանց եւ փաստերուն իր պատասխանը զրաբանութեանց ինչպիսի գլուխ գործոց մը յօրինած էք եւ թէ մենք որքան իրաւամբ որոշած ենք վէճը փակուած նկատել:

Պ. Ռ. ի վառնա. — Շնորհակալ ենք Ձեր համակրութենէն: Ներքեւք որ ձեր յօդուածը չենք կրնար հրատարակել: Շարժումի ուղղուած մեր վերի պատասխանը կարգաւոր կը հասկնաք թէ ոչ այդ թերթին եւ ոչ Շաւարշի հետ կուզենք վէճը նորոգել: Շարժում, որուն նախ զրկել էք ձեր յօդուածը, զայն չի հրատարակելով ցոյց տուած է թէ՛ ինք ալ համարու է Շաւարշին Սուլթանին չափանաւ էֆէնտները ջատագովելու մասին, եւ կամ Շաւարշի յօդուածները հրատարակած է միմիայն անոր համար որ մեղ գէտ հայտնութիւն կը պարունակեն:

Տ. Ա. Գ. Ռոստոմ. — Խնդրենք կարգաւ վերի պատասխանները եւ ներքեւք որ ձեր գրածն ալ չենք հրատարակած միեւնոյն պատճառներով:

ՀԱՆԳԱՆԱԿՈՒԹԻՒՆ

Տիար Բ. Չաքըրեանի հաւանութեամբ հանգանակութիւն բացուած է իրենթակա շատ կարօտ վիճակը դարմանելու և Տաշրուսի տպագրական տառերու մնացորդ պարտքը վճարելու համար:

Յանձնարարելու իսկ պէտք չկայ. զի ամէն Հայ լսած է անունը կամ անձամբ կը ճանաչէ զՏիար Չաքըրեան, որ շատ երկար տարիներէ ի վեր նուիրած է ինքզինք Ազգային Գաղթին, թէ՛ Զէյթունի պանծալի իրանց մէջ և թէ անկէ դուրս զոհելով իր ամէն միջոցներն և որ կը տառապի այսօր ի վառնա նիւթական ծայրայեղ անձկութեան մէջ:

Տարակոյս չունինք որ բարեսէր Հայ ազգայինք անտարբեր չպիտի գտնուին և իրենց նուէրներով պիտի հաճին քաջալերել Զէյթունցի գործիչ մը:

Նուիրատուութիւնը կրնան զբոսնել «Իրաւունք» իմ քաղաքապետները և կամ ուղղակի իրեն Տիար Բաշարու Չաքըրեան վառնա հասցեով:

Եթէ նիւթական միջոցները ներքին Տ. Յարութիւն Չաքըրեան մըտադիր է փոխադրուիլ ի կիպրոս, որ կիլիկիոյ մօտ գտնուելով, կըրնայ անոր խանգարուած առողջութեան նպաստաւոր լինել իր օգուտ և կիլիկիոյ:

ՍՈՒԼԹԱՆ ՎԷ ՎԻԼՀԵԼՄ

Իմէրաթըն Սուլթանը միւլադաթարըն Նուրադինին Սթանպուլ մուկաբիլի շու հօլտա իզահ իթմիշ տիւր:

«Իքի հիւքիւմտարլարըն նէ մէսէլէլէր իւղէրինէ գօնուշուղլարը Սթանիւր պէյտէն (Սուլթանըն սէր քեաթիպի) մատա քիմսէ պիլմէղ իսէտէ Երլուղլուտ սէօլլէնիլինէ կէօրէ, իմրէրաթըն զիյաւտէսի իւլէ, իթիւք օրտուսընըն իմնպիմ ու իթէրթիպաթընտ տայիւր պաղընա. սահաթըր վէրմիշ. վէ իքիւնիստիլմտէ, Անատոլուտա Ալմա. նիայա պաղը իմթիյաղլար վէրիւմէսինի թէքլիֆ իթմիշ. Սուլ-

Թան տախի Ալմանիսարըն թէ-
չէպալուսաթընա գուլըզ վերմէք
վէ անլէրի հիմայէ իթմէք վատ
իթմիշ վէ պու պապտա թիճարէթ
նէղարէթինէ վէ տիկէր տալիրէ-
լէրէ թալիմաթ վէրմիշ :

Իմբէրաթօր թիւրք օրտուսընըն
գուսուրընըն Սուլթանա իլահ
իթմէքլէ, պիր շօղ կէնճ վապիթ-
լէրին Պէրլինէ հօլլանըլմաընը վէ
օրատա իքմալը իլիմ իթմէլէրինի
թալիսիյէ էլլէմիշ տիր : Գէզալ րէչ-
պէրլիկի, վէ թիւճարըլը իլէրի
կէօթիւրմէք իչիւն Սուլթանա նա-
սահաթլար վէրմիշ տիր :

Նօլօտինին մուխպիրի իլապէ-
թէն, պու կիւն թիւրքիանըն զը-
րաաթ վէ թիճարէթի էրմէնի,
րուժ վէ տիկէր էնէպի իգպալ-
բէրէսթլէրին էլինտէ տիր, տէյօր :

ԿԻՐԻՏ

Պու կիւն կիրիտ մէսէլէսի գա-
թիէն հալլ օլունմըլ տըր :

Թիւրք ասքէրլէրի վէ մէմուրլար
պիւթիւն պիւթիւնէ ատատան չէ-
քիլտիլէր :

Պու կիւնլէրտէ Բրէնա Եօրկինին
կիրիտէ կիրմէսի պէքլէնիլիօր,
տէվլէթլէր միւթթիթիգէն անը Սէր
Գօմիսէր իւնպանը իլէ կիրիտէ հօլ-
լայաճաղար : պու պապտէ Սուլ-
թան էլան սօն սէօլլէնիւ սէօլլէ-
յէմէմիշ տիր : Ֆազաթ Սուլթան
հէր նէ տէ սէօլլէրսէ, Եօրկի կի-
րիտլէրին վէ կիրիտ Եօրկինին
օլմուլ պիթմիշ տիր : Գօնսօլալար
թարաֆընտան ասըլարա թէրքի
սիլահ իթմիթմէք թէքլիթինէ ճէ-
վապէն, պունլար «Բրէնա Եօրկի
կիրիտէ ալազ պաստըլը կիւն պիլ
սիլահլարըմըլ անա թէսլիմ իտէ-
ճէյիլ», տէմիշ տիրլէր :

Կիրիտ մէսէլէսինին պու հօլլա
հալլ օլունմասընտան տօլայը, Եու-
նան վէ կիրիտ էհալիսի ֆէվզ էլ
ատէ սէվինտէ տիր : Թիւրքլէր
իսէ կիւլլէրինի էքլիտուլ, «հա»,
նէ իչիւն մուհարէպէ իթմիթ» տի-
յէրէք տիլլէրինէ վուրմագտա տըր-
լար :

ԱՄԷՐԻԿԱ ՎԷ ՍՊԱՆԻԱ

Ամէրիկա վէ Սպանիա մուրախ-
խապարը պէնինտէ՝ Ֆիլիբին ա-
տալարընտան տօլայը, մուպայէնէթ
հասըլ օլմուլ տըր : ախիրէն Ամէ-
րիկա պիր իլլթիմաթօմ վէրուպ,
գաթիէն Ֆիլիբին ատալարըն քէն-
տիսինէ թէրք օլունմասընը թալէպ
իթմիշ իտի : Սպանիա էլան պու
իլլթիմաթօմ ճէվապ վէրմէմիշ
տիր : պու թէքլիթիւրմտան Ամէ-
րիկալըլարըն ճանը սըղըլարագ,
հէնիտէն հարապ վարօրլարընը հա-
զըրլումագտա օլուպ, մուհարէպէ
թէհտիտաթը կէօթէրմէկէ պաշ-
լամըլլար տըր : վէ էկէր պու հաֆ-
թանիհալէթինէ գատար Սպանիա
Ամէրիկալըլարըն իսթէտիկի ճէ-
վապը վէրմէլ իսէ, Ամէրիկալը

մուրախիտալար Բարիտէն մուֆա-
րէքէթլէ, հարապ պօրուլարը չա-
լընաճագ տըր :

Պու տէֆա ինկիլիպլէրին տօղ
րուտան տօղրու Ամէրիկա թարա-
ֆընը թուրքաճաղարը կապէթա-
լարտան անլաշըլըյօր : Տէյիլի Գրօ-
նիլ տիրմիշ տիր, «էկէր Սպանիա
վէ Ամէրիկա պէնինտէ հէնիտէն
հարապ գուհուր իտէր իսէ, ինկիլ-
թէրանըն արսլանը Ամէրիկանըն
գարա գուշու իլէ հանհանա ճէնք-
լէչէճէքլէր տիր» :

ՄԻԹԵՆԵՎ ՎԻԵ

Թայմաըն նէշրինէ պինտէն, էր-
մէնիսթանտա Սիփան տաղընը
թահարրի իթմէքտէ օլան Ալման-
հալը բրօֆիւսօր Պէլիի Համիտիէ
սիւվարիլէրինտէն աղրընա հարէ-
լէնմիշ : Օլ ճիվարտա Ալման գօն-
սօլոսը պուլընմատըլընտան վա-
տաքի ինկիլիլ գօնսօլոսը շէտի
տէն միւհրիվէրին ճէպուլանմաը-
նը իտատա իթմի : վալի բաշա
գօնսօլոսըն իտատասընը գապուլ
էլլէտի իսէտէ, Համիտիլէրին
գօմանտանը Հիւսէյին բաշա վա-
լիի գօրգուլտը : Շիմտի գօնսօ-
լոս սէֆարէթհանէյէ միւրաճաթ
իթմիշ օլարագ, ինկիլթէրա էլ-
չիսի Հիւսէյին բաշանըն աղընը
թալէպ իթմէքտէ տիր :

Ալման վօլթըն պէյանընա կէօ-
րէ ալման էլլիսինին միւրաճաթը
իւզրէ, Սուլթանըն էմրի իլէ միւհ-
րիվէր թուրքուլը հապա օլընմըլ
վէ Պէլիի վանտա հիւքիւմէթ
թէտալի իթմէքտէ իմիշ :

Իմբէրաթօր Երլտըլտա Սուլ-
թան իլէ տիլտիվէ օլմուրուպ,
պիրի պիրինին սըրթընը օվաշ-
տըլարըն էնատէ, Համիտիլէ հա-
տուտարը տէ էօթէտէ իմբէրա-
թօրըն թապաասընըն խաթըրըն
զըլըճ տարպէլէրի իլէ սօրմըլլար :
(Նէ՝ թուհաֆ) :

—Սապըր Սըրպ Գրալը Միլան
նիշ թարաֆլարընտա թէրթիպա-
թը ասքէրիլէ իչիւն կէզմէքտէ
իքէն իքի տէֆա էօլիմտէն գուր-
թուլըլ : Միլանըն չըմէնտըֆլէրլէ
պիր սլմասիթնտան կէչէճէկի էս-
նատէ 3000 էհալի թօրլանմըլ օ-
լուպ, Գրալըն բապիլ օլտըրը վա-
կօնը թաշա թալթմըյար, վէ Գր-
րալ կիւն հալ գաշուպ քնէտիսիի
գուրթուրապիլմիշ, պիտիսէրէ մէզ-
քիր սլմասիթնա ասքէր հօլլանը-
լուպ, 100 թիլի տէրտէսթ օլընմըլ,
Գէզա Նիտէ Գրալըն հաթագ օ-
տատընտա պիր կէնճ սաղլանուպ,
բըշապ էլինտէ Միլանըն կէլմէսի-
նէ կիճէ պէքլէր իքէն հադայը է-
լէ վէրմիշ, պու կէնճ մէքթէպ
թալէպէսի իմիշ :

—Բուսլար Թիւրքիտանը գապթ
իթմէլէրինտէն պէրու (1869) հիւ-
քիւմէթին սարֆիթթը 296 միլիոն
բուլլի օլմուլ վէ վարիտաթը 158
միլիոն ր. : պու հէսապլէ Բուրս
տէվլէթին խաղինէսի Սամարլան :

Թըն զապթընտան պէրու 132 մի-
լիոն ր. զարարա տիւշար օլմուլ :
Գէզա պու կիւնէ գատար թիւր-
քիտան իսլամալընտան ասքէր
վէ պէտէլի ասքէրիլէ ալընմալըլ :
Ֆազաթ պունտան սօնրա պէտէլ
թէրթիպ օլընաճաղընը րէսմի
րուս կապէթալար հաղըյօր :

—Իմբէրաթօր վիլհէլմ Երու-
սաղէմտէ պիլիմ Ս. Յակոբ մա-
նասթըրընը զիյարէթ իթմիշ վէ
էրմէնի միլլէթինին օլ տէրէճէ
միւհէստէմ պիր թէքսիսաթմա մա-
լիք պուլընտըլընա հէյրան օլմըլ
տըր : վիլհէլմին վէ զէվէսինին
պու զիյարէթինտէն տօլայը Երու-
սաղէմտէն հաղըլմըլ օլան մուֆաս-
սալ պիր մէքթուպը պու հաֆթա
կապէթամըլտա մուխթասարէն
նէշր իտէճէկիլ :

—Լօրտ Գէմպրլէյ Լօնտառա
հէնի պիր նուլթ սէօլլէյուպ,
«Մըսըր մէսէլէսինտէ պիլիւն
ինկիլիլէր հիւքիւմէթէ հէմէֆ-
քէար տըր : Ֆաշօտա մէսէլէսի ին-
կիլթէրայա ֆալիտէլի սուրէթտէ
հալլ օլընտը : Մարշանըն Ֆաշօտա-
տան չըգմասը Ֆրանսանըն նամու-
սընա նազիսէ կէլթիմէմիշ տիր :
ինկիլթէրա Ֆրանսա իլէ միւհա-
սէպալթը տօսթանէտէ պուլընմա-
սընտա պէօլիւք ֆաիտէմիլ վար
տըր», տէմիշ :

—Ալման Հալլա Տրէյֆիւս
էօլմիշ տէմիշտի, ֆազաթ պիլ
ախէրէ պու հաֆաթիսին էսասըլ
օլտըլը պիլտիլիլտի : կաղէթալար
իսէ՝ էկէր Տրէյֆիւս սահիհէն
էօլմիշ իսէ, պու թապիի էօլիւմ
օլմամալը, անը էօլիւրմիշ օլա-
ճաղար, տէյօրլար :

Ժէնէրալ Զիւրլէնտէն վէ Շա-
նուան մահէթմէի թէմիլիտէ իֆա-
տէլէրինի վէրմէքտէն մատա,
Շանուան տէմիշ տիր քի, կիլի
էվրազլարտա աղըր մէսուլիլթլէր
վար վէ ծըլարը մէյտանա չըգուր-
մագ խարիճի պէօլիւք գարըլըզ-
լըզլարա սէպէպիլէթ վէրէ պիլիլ :

ՍՕՆ ՀԱՎԱՏԻՍ

—Կիրիտին Սէր Գօմիսէրի հա-
խօտ Բրէնի Բրէնա Եօրկի, Գօ-
րէնհակտան վիլհէնտալ վէ օրատան
Թրիէսթի իւզէրինտէն Բիրէյա
կէլմիշ տիր :

—Սպանիա մուրախիտալարը Մ-
Ամէրիկանըն Ֆիլիբին ատալարընա
տալի թալէպլէրինի րէտտ իթմէք
իչիւն գուրար վէրմիշլէր վէ միւհա-
լէհանամէի իմլալամալուպ, պիր
բրօթէթմիսամէ թանղիմ իտէճէքլէր
իմիշ :

—Մաքթիսիա վէ Ալմատուտա
իւրիսթիյանլարըն ահալը իւզէրի-
նէ թանըն Սթանպուլ մուխպիրի
պիր մէքթուպ հաղըլ օլուպ, իլք
պահարտա տէվլէթլէրին միւհա-
լէլէ իտէճէքլէրինէ իւմիտ կէօս-
թէրմիշ տիր :

Մէքթիւր մէքթուպըն էհէմի-
լէթլի օլմասը ճիհէթլէ, չարշանպա

կիւնքի նիւսիսիլտէ թէրճէմէ-
թէն նէշր իտէճէկիլ :

—Լօրտ Զէմպրլէյ տալի պիր
նուլթ սէօլլէյուպ, Եվլէլլէրի
Մըսըրըն միւսթէմիլիքեթալընտան
օլուպ, տէրվիլլէրին վէ սալի գա-
պիլլէրին էլինէ կէլմիշ օլան էյա-
լէթլէրի Մըսըր նամընա զապթ
իտէճէկիլ : Նիլիւզէրինտէ Ֆրան-
սըլարըն թիճարէթինէ սուհուլէթ
վէրիլէճէկինի վատ իտէպիլիլիլ,
ֆազաթ օլ թարաֆլարտան հէր
վէրմէք իչիւն ասլա միւհաքքէ-
րէյէ կիրիշէմէյիլ, տէմիշ տիր :

ԶԱԽԻԷ ԲԻԱՑԱՍԸ

Պուղսայ
Վալոն, լիպրա 55-58 հէք 9-9.50 ֆր.
Արապա, 55-60 հէքթ. 9-12:
Արապ
Լիպրա 42-50 հէքթ. 5.80-6.20 ֆր.
Ֆալալիս
100 օգ. 18-22 ֆր. մալընա կէօրէ:
Եուլաթ
Արապա 20-25. ֆիլաթ 5.40-5.70 ֆր.
Ճար
Արապա 5-6. լիպրա 58-60. ֆր. 4.60-5:
Մարր
55-58 լիպրա. ֆիլ 6.80-7:
Երանտէ 150-200 արապա վէ 25-30
վալոն պուլգուպ, 70-80 արապա ար-
ապ կէլմէքտէ տիր:
Ֆասուլիա 8-10 արապա:
Արապա մուսթէլէսի նարթէօն 21 ֆր.
հիսապը իլէ:

ԹԱՏԵՐԱԿԱՆ ՆԵՐԿԱՑԱՑՈՒՄ

Ի ՆՊԱՍՏ
«ԱՂԶԻԱՆՑ ԿԻՐԱՐԱՆ»ԻՆ

ՆԵԼԻ ԱՇՏԱՐԱԿԸ

Աղքատները Տիւմայի սոյն հուշա-
կաւոր թատրերգութիւնը պիտի
ներկայացուի թուրքերէն լեզուաւ
Անկէլ Սալմոֆի սրահին մէջ, այս
երեկոյ ժամը 8 1/2 ին :

ՈՒՇԱԳՐՈՒԹԻՒՆ

Կը գնեմ մեծ և փոքր քանակու-
թեամբ պուլկարական գործածուած
բօստի բուլբր. մասնաւորաբար
1879 և 1884 տարւոյ բուլբր՝ ա-
մենաբարձր գնեցող : Ունեցողները
թող հաճին գիմը ինձ : զրկելով
իւրաքանչիւր տեսակէն մի մի օրի-
նակ, և նշանակելով անոնց գիները
Սարգիս Թորոսեան (Ս)
Թուսուք

ՅԻԿԼԵՐ ԵՒ ԲԵԹԷՆԵԱՆ

Յանձնակատարք ի Ռոշաճուք

Պատիւ ունին ծանուցանել թէ
գիւրամատչելի պայմաններով կը
հայթաթեն երկրագործական մե-
քենաներ, դաշնակներ, ջաղացքի
աման տեսակ գործիք և պիտուք,
մանիֆաթուրայի և կուլանթէրիայի
վերաբերեալ ապրանքներ, ևւն :

Ամեն կարգի և ամեն տեսակ
ընտիր ապրանքներ ուրիշի հաշւոյն
համար բերել կուտան ուղղակի եւ-
րոպական առաջնակարգ գործա-
րաններէ շատ չափաւոր գիներով :
Իրենց դիմողը գոհ պիտի մնայ :
4—5

Отговорникъ М. Сконовъ
Печатница "Взаимность"—Варна